Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2758

26
U-50

1884

2010

Ф2001

ԳԻՐՔ

ՀԱՆԴԻՍԱԴՐՈՒԹԵԱՆՑ ՏՕՆԻՑ

ԿԱՅՍԵՐԱԿԱՆԱՑ.

Շարակարգեալ ի Սիմէօն Կաթուղիկոսէ ամենայն Հայոց Երեւանցւոյ՝ յաւելուածովք նորահիւս շարականաց եւ աղօթից: Յամի Տեառն 1771. Յուլիսի 10:

ՏՊԱԳՐԵԱԼ ԵՐՐՈՐԴ ԱՆԳԱՄ

Ըստ հնագոյն օրինակի տպեալ է 1833 ամի.

Հրամանաւ Սինոդի Սրբոյ Էջմիածնի.

1884—ՌՃԼԳ

Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ.

26
U-50

280
1004-Սխ
11501
26
Ս-50
1005
203389

ԳԻՐՔ

ՀԱՆԴԻՍԱԴՐՈՒԹԵԱՆՑ ՏՕՆԻՑ

ԿԱՅՍԵՐԱԿԱՆԱՑ.

Շարակարգեալ ի Սիմէօն Կաթուղիկոսէ ամենայն Հայոց Երեւանցւոյ՝ յաւելուածովք նորահիւս շարականաց եւ աղօթից:

Ցամի Տեառն 1771. Յուլիսի 10:

ՏՊԱԳՐԵԼ ԵՐՐՈՐԴ ԱՆԳԻՄ

Բոլոր հնագոյն օրինակի պէս է 1833 ամի:

Հրամանաւ Սինոդի Սրբոյ Էջմիածնի.

1884—ՌՅԼԳ

Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.

ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ:

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникиана
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Յառաջաբանութիւն Հեղինակին։

Եթէ հարկադրիմք ի սուրբ Գրոց և մանաւանդ ի Սրբազան Առաքելոյն Պօղոսէ՝ աղօթել հասարակապէս վասն ամենայն Թագաւորաց։ Ապա որքան և-ս հարկ է ի վերայ մեր աղօթել վասն քրիստոնէից Թագաւորաց, որով անունն Քրիստոսի փառաւորի, և սուրբ խաչ Նորին պայծառացեալ փայլի ընդ ծագս տիեզերաց։

Արդ եթէ այսպէս, ապա որքան և որքանապատիկ հարկ է ի վերայ մեր, և որպէս պարտական իսկ եմք աղօթել վասն մերոյս յոգներախտի և խնամաշատի աստուածազարդի քրիստոսապսակի, գերահռչակ և պայծառ անուն ԵԿԱՏԱՐԻՆԷ Կայսերուհւոյն Մօրն ողորմութեան, որ իբրև զարեգակն փայլի ընդ արեգակնափայլ Արքայորդւոյն իւրոյ ՊԱՒԼ ՊԵՏՐՈՎՉԻՆ. և զուարճացուցանէ ոչ միայն զընդ հովանեաւ իւրով եղեալսն, այլև զամենայն երկրպագուսն Քրիստոսի։ ԸՆԴ ՈՐՈՑ հովանաւորութեամբն և ազգս մեր կեայ լաւապէս և պահպանութեամբ ՆՈՐԻՆ կենցաղավարի ապահով և աներկիւղ յամենից թշնամեաց։ ՈՐՈՑ զգութն և զենամն հանապազ տեսանէ, և ողորմութիւն վայելէ միշտ։ Որ և բաց ի յայսպիսեաց հանապազաստիւռ և հասարակաբաշխ բարերարութեանցն՝ ի ներկայումս և և-ս գերազանցապէս զողորմութիւնս և զբարերարութիւնս եղոյց յատկապէս ազգիս մերոյ և մերում՝ անարժանութեան՝ քան զարժանն մեր, լսելով աղերսանաց մերոց և կատարելով զինչս։ այսինքն՝ ԻՒՐՈՎ գերաղօր հրամանագրովն, և անպարտելի կնքովն՝ զԱթոռս ամենայն Հայոց ըզսուրբ էջմիածին պսակեալ փառաւորեաց. զազգս Հայոց՝ իւրոյ ամենապայծառ Թագաւորութեան սիրելի և իւրային արձանագրեաց. և զանարժանութիւնս մեր յատուկ սիրոյ և ողորմութեան նշանաւ խիլայազարդեաց և մխիթարեաց։ Արդ՝ որովհետև այսքան գերազանց բարերարութեան ոչ ինչ կարէաք հատուցանել զփոխարէնն. վասն որոյ զայս քան բանս շարադրեցաք վասն մեծապայծառ Տօնախմբութեան ՆՈՐԻՆ. և կանոնեցաք զի ազգս Հայոց որքան գոն ընդ օրհ-

Նեալ տէրութեամբ ՆՈՅԻՆ ի յաւուրս շնորհալի ոտնից ՆՈՅԻՆ՝ եկեղեցականաց և աշխարհականաց մեծաւ հանդիսաւորութեամբ կատարեսցեն զայս կարգ՝ զոր ամենաթագաւորն Աստուած ի փառս իւր համարելով լուիցէ՝ և զինդրուածս բազմութեան կատարեսցէ՝ ամէն։

Քրիստոսի Նուաստագոյն Ծառայից Ծառայ Երևանցի Սիմեոն Կարողիկոս ազգին Հայոց և Սրբոյ Առաքելական Աթոռոյս Էջմիածնի։ Ի ՆՈՐՈՂ թվականին 1771։ ի Յունիսի տասն 10։ յերեսուն էմով։

Եւ յաւարտ պատարագին վառեսցեն զջահս և զաշտանակս և զկանթեղս՝ և երկու դպիրք յառաջոյ սեղանոյն ընդ աջմէ և ընդ ահեկէ ունիցին զմոմեղենս ի ձեռս։ յորժամ և ամենայն Հոգևորականք ունելով բան իւրաքանչիւր աստիճանի զշուրջառ կամ զշապիկ ելցեն յատեան։ Եւ պատարագիչն եթէ իցէ Արք եպիսկոպոսն կամ վարդապետն և կամ աւագ երէցն Եկեղեցւոյն՝ յիջանելն ի բեմէ յաւարտ վերջին աղօթիցն սր է։ ԿապարՕ՝ օրինաց և մարգարէից։ թողլով Օրհնէցէք զտէրն։ Եւ՝ օրհնեալ էր էրՕ՝ն։

Քարոզեսցէ ասրկՕ՝ն։

Եւ ևս խաղաղութեան զտէր աղաչեսցուք։ ընկալ կեցո՛ և ողորմեա՛։

Եւ՝ պապարագիչն ասրկանելով զԽՈՐՆ ի ԲՈՒՅՆ ասասցէ։

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։

Եւ առեալ զբուրվառն խնկարկեսցէ ինքն սեղանոյն և ամենայն եղելոցն յեկեղեցւոջ Հոգևորականաց և մարմնաւորականաց երկիցս կամ երիցս անգամ։ յորժամ և կացեալքն յատենի սկսանիցին միաբան ի միտսին երգել քաղցր ձայնիւ զշարական։ դէ։ Ամենազոր Աստուած և այլն։

Իսկ եթէ պատարագիչն իցէ այլ ոք ի Հոգևորականաց՝ մերձ յաւարտ պատարագին զգեստաւորեսցի ինքն Արք եպիսկոպոսն կամ վարդապետն և կամ աւագ երէցն՝ և կամ այլ ոք յառաջաւորաց եկեղեցւոյն։ և կացցէ յատենի ի տեղւոջ իւրում։ Եպիսկոպոսն ունելով ի ձեռս զգաւազան և զիսաչ։ և այլքն զիսաչ միայն և յորժամ պատարագիչն աւարտեսցէ զաղօթսն։ ԿապարՕ՝ օրինաց։ Նա ինքն՝ կացցէ անդէն յառաջոյ սեղանոյն ունելով զաւետարանն ի գիրկն։ Յորժամ յառաջ մատուցեալ սարկաւագն առ Արք եպիսկոպոսն և կամ առ այլսն զգեստաւորեցեալս՝ քարոզեսցէ։ Եւ՝ Եւ խաղաղութեան։ Եւ նա արկանելով զխունկ արասցէ այնպէս՝ որպէս և գրեալն է։

Եւ աւարտեալ զինկարկութիւնն մինչև ցլրումն շարականին՝ եկեալ կացցէ ի տեղւոջ իւրում։

Շարական (դէ)

Ամենազոր Աստուած և թագաւոր յաւիտենից, որ ի պատկեր քո երկնաւոր և աներևոյթ թագաւորութեանդ, հաս-

տատեցեր յերկրի Թագաւոր ԶԱՂԷՔՍԱՆԴՐ ԱՂԷՔՍԱՆԴՐՈՎԻՉՆ (կամ այս անուն) ի կառավարել և ի պահպանել զքո ժողովուրդ. պահեա զսա անսասան և անպարտելի:

Աղբիւր կենաց և պարգևիչ խաղաղութեան և զօրացուցիչ քոյոց ծառայից. յաւել զկեանս խաղաղականս ի քէն պըսակեցեալ Աբքայիս մերոյ ԱՂԷՔՍԱՆԴՐ Աղէքսանդրովչի (կամ այս անուն) և զօրացո՛ ի թշնամեաց պատերազմի ի փառս Անուանդ և ի պայծառութիւն եկեղեցւոյ քում սրբոյ. յորում փառաւորի անդադար տէրութիւնդ քո:

Բարձրացո՛ Տէր և փայլեցո՛ զգաւազան իշխանութեան ՍՈՐԱ ընդ ամենայն ծագս երկրի. ընդարձակեա՛ շառաւիղք և հարազատ ժառանգակցաք մինչև ի կատարած աշխարհի. այլև օրհնեա՛ և պահպանեա՛ զամենեսեան որք ընդ իշխանութեամբ ՍՈՐԻՆ ենթադրին. յորոց փառաւորի անդադար տէրութիւնդ քո:

Թագաւոր երկնաւոր՝ զեկեղեցի քո անշարժ պահեա՛, և զերկրպագուս անուանդ քում պահեա՛ ի խաղաղութեան:

Ապա երկուք ի դպրաց գնացեալ յատեան՝ մինն ասասցէ: Ալէլ-ույա ալէլ-ույա:
Եւ միւսն: Տէր է զօրութեան փոքր ի բարձրեալ ի Թագաւորն և այլն:
Եւ այսպէս տուն առ տուն սաղմոսեսցեն մինչև յեօթներորդ տունն:

Ալէլուիայ ալէլուիայ:

Ի կապարաշ. Սաղմոս Դաւթի. Ի:

Տէր ի զօրութեան քում ուրախ եղիցի Թագաւորն. ի փրկութեան քում ցնծասցէ յոյժ:
Ցանկութիւն սրտի նորա ետուր նմա, և զկամս շրթանց նորա ո՛չ արգելեր ի նմանէ:
Ժամանս արարեր զնա յօրհնութիւն քաղցրութեան քո. և եդեր ի գլուխ նորա պսակ ի քարէ պատուականէ:
Կեանս խնդրեաց ի քէն՝ և ետուր նմա ընդ երկայն աւուրս յաւիտեանս յաւիտենից:
Մեծ են փառք նորա ի փրկութեան քում՝. զփառս և զմեծ վայելչութիւն դիցես ի վերայ նորա:

Տացես զնա յօրհնութիւն յաւիտեանս յաւիտենից. և ուրախ արասցես զնա յուրախութիւն երեսաց քոց:
Թագաւոր յուսացաւ ի Տէր. յողորմութենէ բարձրելոյն նա մի՛ սասանեսցի:

Եւ յաւարտիլն սաղմոսաց՝ ի շուրջառ ունեցող քահանայից դաս առ դաս մի զկնի միոյ յառաջ մատուցեալ յատեան՝ ընթերցցին զյորեսին ընթերցուածսն:

Ընթերցուածս յԱ-ակաց:

ԳԼ. լա. 1:

Ամենայն բանք Աստուծոյ խօսեցեալք են. հրաման Թագաւորի զոր խրատեաց զնա մայր իւր: Բաց զբերան քո բանիւ Աստուծոյ. և դատեա՛ իրաւամբք. և խնդրեա՛ և որոշեա՛ զաղքատն և զտկարն: Փառք Աստուծոյ ծածկեն զբանս և փառք Թագաւորի պատուեն զհրամանս: Երկին բարձր և երկիր խոր, սիրտ Թագաւորի անքննին: Փո՛րձ տես զանփորձ արծաթոյ և սրբելով սրբեսցի ամենայն: Սատակեա՛ զամբարիշտս յերեսաց Թագաւորի. և ուղղեսցի արդարութեամբ աթոռ նորա՝ Մի՛ հպարտանար առաջի Թագաւորի և ի տեղիս մեծամեծաց մի՛ մատչիր. զի լաւ է քեզ՝ Թէ ասիցէ ոք ի վեր առիս մատիր. քան Թէ կորանայցես առաջի հզօրի:

Ընթերցուածս յեռայեայ Մարգարէ է

ԳԼ. խե. 1:

Այսպէս ասէ տէր Աստուած ցօծեալն իւր ցԿիւրոս. զորոյ կալայ զաջոյ ձեռանէ նորա հնազանդեցուցանել առաջի նորա զազգս և զզօրութիւն Թագաւորաց խորտակեցից. բացից առաջի նորա զդրունս և քաղաքք մի՛ փակեսցին. ես երթայց առաջի քո, զլերինս հարթեցից. և զդրունս պղնձիս խորտակեցից և զնիգս երկաթիս փշրեցից: Եւ տայց քեզ զգանձսն խաւարինս և զաւանդս աներևոյթս բացից քեզ. զի ծանիցես Թէ ես եմ Տէր Աստուած՝ որ կոչեցի զանուն քո՝ Աստուածն Իս-

բայէլի։ Վասն Յակոբայ ծառայի իմոյ և Իսրայէլի ընտրելոյ. ես կոչեցի քեզ զանուն քո՝ և ընկալայ զքեզ։

Պէտրոսի Առաքելոյն է Կաթողիկէական Առաջին Ընդհանրական է ընթերցուածս։

ԳԼ. Բ. 13։

Հնազանդ լերուք ամենայն մարդկեղէն ստեղծուածոյ վասն Տեառն։ Եթէ թագաւորի, իբրև առաւել ումք։ Եթէ դատաւորաց՝ իբրև ի նմանէ առաքելոց, ի վրէժխնդրութիւն չարագործաց՝ և ի գովութիւն բարեգործաց։ Զի այսպէս են կամք Աստուծոյ. բարեգործացն պապանձեցուցանել զանզգամ մարդոյ զանգիտութիւն։ Իբրև զազատս լինիլ՝ և մի՛ իբրև զպատրուակ չարութեան ունիլ զազատութիւնն, այլ իբրև Աստուծոյ ծառայք։ Զամենեսեան պատուեցէ՛ք, զեղբայրսիրութիւն սիրեցէ՛ք. զԱստուծոյ երկերսո՛ւք. զթագաւորս պատուեցէ՛ք։

Պօղոսի Առաքելոյն է Հռովմայեցւոց Ընդհանրական է ընթերցուածս։

ԳԼ. ԺԳ. 1։

Ամենայն անձն որ ընդ իշխանութեամբ է ի հնազանդութեան կացցէ. քանզի ո՛չ յուստեքէ է իշխանութիւն՝ եթէ ո՛չ յԱստուծոյ. և որք են՝ յԱստուծոյ կարգեալ են։ Այսուհետև որ հակառակ կայ իշխանութեան՝ Աստուծոյ հրամանին հակառակ կայ. և որք հակառակ կան, անձանց դատաստանս ընդունին։ Զի իշխանքն ո՛չ են յերկիւղ բարեաց գործոց՝ այլ չարաց. կամի՞ս չերկնչել յիշխանութենէ անտի՝ զբարիս գործեա՛, և ընկալցիս զգովութիւն ի նմանէ։ Զի Աստուծոյ պաշտօնեայ է քեզ ի բարիս. ապա եթէ զչար գործիցես, երկի՛ր. զի ո՛չ եթէ վայրապար ածեալ է սուսեր ընդ մէջ. զի Աստուծոյ սպասաւոր է՝ վրէժխնդիր ի բարկութիւն այնմ՝ որ զչարն գործիցէ։ Վասն որոյ հարկ է հնազանդ լինիլ՝ ո՛չ միայն վասն բարկութեան, այլև վասն մտացն խղճի. վասն այնորիկ և հարկս հարկանէ՛ք՝ զի Աստուծոյ սպասաւորք են ի նոյն կանխեալք։

Արդ՝ հատուցէ՛ք ամենեցուն զպարտս, որում զհարկ՝ զհարկն. որում զմաքս՝ զմաքսն. որում զերկիւղ՝ զերկիւղն. որում զպատիւ՝ զպատիւն. և մի՛ ումեք պարտական գտանիցիք։ Եւ արդ՝ աղաչեմ նախ քան զամենայն՝ առնել աղօթս, խնդրուածս, պաղատանս, գոհութիւնս վասն ամենայն մարդկան. մանաւանդ վասն թագաւորաց և ամենայն իշխանաց։ Զի խաղաղութեամբ և հանդարտութեամբ վարեսցուք զկեանս մեր ամենայն Աստուածպաշտութեամբ և սրբութեամբ. զի այն է բարի և ընդունելի առաջի փրկչին մերոյ Աստուծոյ։

Ապա ասասցէն ժամասացն է յայն է դոյ դասէ։ Սաղմոս ՃԹ. 3։

Ալէլուիայ ալէլուիայ։

Դաւազան զօրութեան առաքեսցէ քեզ Տէր ի Սիօնէ. և տիրեսցես դու ի մէջ թշնամեաց քոց։

Ե՛ է դի՛ս դասէ նոյնպէս է յայն։

Ալէլուիայ օրթի։

Իսկ եթէ եպիսկոպոսն լցէ պատարագիչ կամ նախապատիւն եկեղեցւոյն՝ որում պատկանի կատարումն հանդիսի տօնախմբութեանցն. այլ ոմն ի նախապատիւ քահանայից յառաջ մատուցեալ ի տեղի ընթերցուածոցն ասասցէ։

Խաղաղութիւն ամենեցուն։

Յետ որոյ դոյ դասի ժամասացէն ասասցեն։

Եւ ընդ հոգւոյդ քում։

Ե՛ յա՛ս որ նոցին ասասցէ փոխանայն է յայն ճաշին։

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթէոսի։

Ե՛ ժամասացէ դոյ դասոյն նոյնպէս է յայն ճաշին ասասցեն։

Երկիւղածութեամբ լուարուք։

Ե՛ է դի՛ս դասէ։

Փառք քեզ տէր Աստուած մեր։

Ապա ասասցէ քահանայն նոյնպէս յայնմ։

Առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ՝ ժամասացն ոչ պատոյն գովէսցեն քարոյզ յայնմ։

Պռօսխումէ։

Եւ՝ ոչ՝ ի հանդիպոյ նոցա նոյնպէս։

Աստ Աստուած։

Յետ որոյ սկսանիցի քահանայն ընթերանալ զաւետարանն։

Մատ. Գլ. իբ. 15։

Յայնժամ գնացեալ փարիսեցիքն առին խորհուրդ զնմանէ՝ թէ որպէս գնիցեն նմա զորոգայթ բանիւք։ Եւ առաքեն առ նա զաշակերտսն իւրեանց հերոդիանոսօքն հանդերձ՝ և ասեն վարդապետ՝ գիտեմք զի ճշմարիտ ես, և զճանապարհն Աստուծոյ ճշմարտութեամբ ուսուցանես, և ոչ է քեզ փոյթ զումեքէ, և ոչ հայիս յերեսս մարդոյ։ Արդ՝ ասա մեզ՝ զիարդ թուի քեզ, պարտ է հարկս տալ կայսեր՝ թէ ոչ։ Գիտաց Յիսուս զխորամանկութիւն նոցա, և ասէ՝ զի՞ փորձէք զիս կեղծաւորք։ Ցուցէք ինձ զդահեկան հարկին, և նոքա մատուցին նմա զդահեկան մի։ Եւ ասէ ցնոսա Յիսուս. օ՞յր է պատկերս այս՝ կամ գիր. ասեն՝ կայսեր։ Յայնժամ ասէ ցնոսա, երթա՛յք՝ տո՛ւք զկայսերն՝ կայսեր. և զԱստուծոյն՝ Աստուծոյ։ Իբրև լուան՝ զարմացան, և թողին զնա և գնացին։

Եւ յաւուր աւետարանին՝ տպողէոյն սարկաւագն քարոյզ յայնմ։ է ընդ։

Եւ ես խաղաղութեան զտեր աղաչեսցուք. ընկա՛լ կեցո՛ և ողորմեա՛։

Եւ՝ կոպարող հանդիպին ընդ եպիսկոպոսն էջէ՝ և ընդ այլսո՛ սասցէ։

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Ապա ոնկցին ամենեքեան ի ծունկս, նախ բարձրացուսցեն զԹագն Եպիսկոպոսին. կամ զսաղմոսարան վարդապետին և կամ Աւագ երեցոյն ի գլխոյ նորա երկոքին գպիրք կացեալք յաջմէ և յահեկէ. ապա այսպէս բացագլուխ սկսանիցի ընթեռնուլ զաւօթս զայս շարահիւսեցեալ ի Սիմէոն Կաթուղիկոսէ ամենայն հայոց Երևանցւոյ։

Օրհնեալ ես Հայր ամենակալ Աստուած ճշմարիտ անսկզբնաբար ծնօղ Որդւոյդ միածնի և բղխօղ Հոգւոյդ սրբոյ։ Օրհնեալ ես Որդիդ միածին և Բանդ Աստուած ճշմարիտ էակիցդ Հօր և սրբոյ Հոգւոյն. ծնեալդ ի Հօրէ նախ քան զյաւիտեանս։

Օրհնեալ ես Հոգիդ սուրբ Աստուած ճշմարիտ. բղխեալդ ի Հօրէ անժամանակապէս և անսպառաբար փառակից Հօր և Որդւոյն միածնի։ Օրհնեալ ես եռանձնեայ Ամենասուրբ Երրորդութիւն անբաժանելի և մի Աստուածութիւն համահաւասար և համագոյ. մի էութիւն. մի բնութիւն. մի տէրութիւն. և մի իշխանութիւն. արարիչ և ստեղծող երկնաւորաց և երկրաւորաց. տիրող և նախախնամող կարգադրիչ և զարդարող ամենեցունց։ Ամենակալ ամենաբաւական ամենազօր ամենահարուստ ամենառատ ամէնողորմ ամենագթած. թագաւոր թագաւորաց և տէր տերանց որ միայն ունիս զանմահութիւն և բնակեալ ի լոյս անմատոյց. որում հաւատամք խոստովանիմք. և երկրպագանեմք յամենայն յանձնէ, յամենայն զօրութենէ, յամենայն սրտէ և յամենայն մտաց։ Քանզի դու տէր Աստուած մեր գոլով քոյով սեպհականաւ և իրականաւ փառօքդ փառաւորեալ և քոյով ամենահարուստ բարութեամբդ զուարճացեալ և անկարօտ իսկ այլոց. ոչ կամեցար միայն ունիլ և վայելել զանճառելիսդ բարութիւն. վասն որոյ որպէս թէ ստիպեցեալ ի քումմէ անհնոյ բարերարութենէ՝ գոյացուցեր յոչնչէ միով բանիւ արարչականաւ զերկինսդ վերին և զգի դմին բնակիչ զերկնային զանմարմին և զանեւոյթ էութիւնսն հրեշտակականդ դասուց, ի հաղորդիլ ըստ կարողութեան՝ քումդ բա-

րեաց և լինիլ փառաբանիչ ամենափառաւոր Թագաւորութեանդ։ Սակայն և այդոքիւք ոչ շատացեալ անապառելի բարութիւնդ՝ յառաջ ածեալ գոյացուցեր յանէից զերևելիս զայս զերկիր և զմ ի սմա բնակիչ զերկնային զմարմնաւոր և զնիւթեղէն եղելութիւնս. զոր և զարդարեցեր երևելի և մարմնաւոր բարութեամբ։ Արդ՝ տեսեր ամենատեսդ Աստուած, զի ամենայնիւ անհաղորդք, աննմանք, և ամենևին զատեալք էին յիրերաց՝ երկնայինքդ և երկրայինքս, և ոչ գոյր շաղկապ և միջնորդ կցորդօղ, և ընտանեցուցանօղ երկուց տարակացելոց ծայրիցն. և մանաւանդ զբաւական իսկ վայելօղ ոչ գոյր երկրաւորացս բարեաց, (զի երկնայնոցդ լի և պատարուն փառազարդ էութեանց հարստացելոցդ յամենահարուստ բարութենէդ՝ ոչ ինչ էր կարօտութիւն և պակասութիւն). վասն որոյ՝ առ ի ցուցանել զամենակարող և զամենաքանչ զօրութիւնդ, ստեղծեր զմարդս բանական՝ ամենաստեղծ ձեռօքդ ի հոգւոյ իմանալւոյ և ի մարմնոյ զգալւոյ ըստ պատկերի, և ըստ նմանութեան ստեղծողիդ, և կացուցեր զնա տէր և իշխան ի վերայ երկրի և երկրականացս հնազանդ առնելով նմա զամենայն, և ի պատիւ պատկերիդ՝ գերազանցապէս զարդարեցեր զնա փչմամբ յատկական շնորհիդ, և եղեր ի միջի երկուց անընմանիցն ծայրից շաղկապ և միաւորիչ և վայելող երկուցն փառաց և բարութեանց։ Զի ըստ Հոգւոյն՝ զհոգևորացն և զերկնայնոցն բերցէ զնմանութիւն, և նոքօք զմայլեցի. իսկ ըստ մարմնոյ զերկրաւորացս վայելեսցէ զբարութիւն։ Թէև մնալոց էր մարդս ի յայս երջանիկ կացութեան և ունելոց էր զայս յատկական պատիւս և գերազանցագոյն իշխանութիւնս ի մէջ ամենից ստեղծուածոց քոց միտապէս. եթէ ըստ նմանութեան ամենաստեղծ Թագաւորիդ, ի յողորմութիւն և յիրաւունս իցէր պահեալ զաթոռ Թագաւորութեան իւրոյ։

Բայց սակայն Թողեալ զնմանութիւն ստեղծողիդ, և զսէր երկնայնոցդ վայելչութեանց՝ պատրանօք նախաչարին յարեցաւ ի մարմնաւորս կոյս, և սոքօք համարեցաւ միայն շատանալ նմանելով անասնոց և անբանից ըստ մարդարէին, և իսպառ մոռացաւ զկամն՝ զօրէնս և զդատաստան քո։ Այնուհետև զերկրաւորս հազիւ կարաց գիտել, և որ ինչ առ ոտս իւր կայր, աշխատութեամբ գտանել ըստ իմաստնոյն։ Իսկ զքոյդ և զերկնաւորացդ խորհուրդ ո՞րպէս կարէր գիտել։ Արդ՝ այս թշուառաբեր դիպուածս և անողջանալի հիւանդութիւնս որովհետև հանրական էր և բոլորի ընութեան մարդոյս էր տիրեալ. վասն այնորիկ հանրակարողի և ամենազօր բժշկի կարօտանայր։ Վասն որոյ հարկեցեալ ի մարդասիրական գթոյդ, Հայր երկնաւոր Աստուած, առաքեցեր զՍիածին Որդիդ քո զամենազօր բժիշկդ ի յայց քումդ պատկերի։ Որոյ և եկեալ փրկական տնօրէնութեամբն իւրով՝ ազատեաց զբոլոր ընութիւնս մեր ի հանրատարած հիւանդութենէն. և ի գերութենէ նախաչարին. և ծանոյց մեզ զքեզ ճշմարիտ Աստուած. և եցոյց մեզ զքոյդ զօրէնս և զդատաստանս. ուսոյց մեզ զերկնայինդ ճանապարհ, խոստանալով զառաջինն երջանկութիւն՝ և պատուիրեաց մեզ՝ ասելով թէ՝ ահաւասիկ ողջացար, մի՛ ևս մեղանչիցես. զի մի՛ ևս պատահիցի քեզ այդ թշուառութիւն։ Արդ՝ ո՛վ բարեբար Աստուած, և Հայր ամենակալ. թէպէտ և ևս բազմապատիկս արար մեզ բարերարութիւնդ և ի յայց զամենառատ մարդասիրութիւնդ. սակայն՝ գոլով մեր մարմնոյ երկրասիրի պատահեալ. և ի թիւրս դիւրաշարժ մտաց վիճակեցեալ. դժուարաւ կարէաք զերկնայնոցդ խոկալ միշտ. և ի մտի ունիլ զքոյդ արդար դատաստան։ Այլ մանաւանդ դու ամենակալ Թագաւորդ մեր, և քոյդ դատաստան գոլով անսերևոյթ և անտեսանելի ի մէնջ, և նատեալ այժմ ի յողորմութեանդ յաթոռ՝ ոչ միշտ ի գործ ածես զարդարութիւնդ երևելապէս. վասն որոյ՝ հաստատեցեր յերկրի զերկրաւոր և զմարմնաւոր Թագաւորս. որոց և զսիրտ ի ձեռինդ ունելով՝ ազդես ի միտս նոցա զերաւունս և զկամն քո, և շարժես երևելապէս ի վրէժխնդրութիւն չարագործաց, և ի յապահովութիւն և ի խնամողութիւն բարեգործաց։ Զորս տեսանելով՝ չարքն բարիացին. և բարիքն արիացին. և մանաւանդ այնու ի միտ բերեալ խոկացին զքումմէ ահեղ դատաստանէդ։ Այլ ոչ միայն այսր աղագաւ. այլև ի պահպանութիւն

և ի յապահովութիւն հաւատացելոցս քոց ի յարձակմանց ա-
նօրինաց և ի թշնամեաց եկեղեցւոյ քում սրբոյ: Որև ըստ
այդմ բարեսէր կամացդ, յատկապէս ողորմելով մեզ նուաստ
և անարժան ծառայիցս քոց, շնորհեցեր մեզ և երկրիս մերոյ
Թագաւոր (զմեծ Կայսրն ամենայն Ռուսաց ԶԱԼԷՔՍԱՆԴՐ
ԱԼԷՔՍԱՆԴՐՈՎԻՉՆ) զՈՐՈՑ այսօր ծննդեան յի-
շատակն * տօնախմբելով մեծաւ հանդիսաւորութեամբ, զուար-
ճանամբ և ուրախանամբ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ: Արդ՝
ով բարերար և ողորմած Աստուածդ մեր, մեք յետնեալ և
անարժան ծառայքս քո՝ զի՞նչ տացուք անկարօտիդ զորի-
տուր և զփոխարէն այսքանոյ անհնոյ բարերարութեանդ քո,
զոչ այլ ինչ ունիմք և կարեմք, բայց միայն զփառս, զգոհու-
թիւնս, և զերկրպագութիւնս՝ հանդերձ մեծաւ շնորհակալու-
թեամբ վերառաքեսցուք քեզ ի բարձունս Հօր և Որդւոյ և
Հոգւոյն սրբոյ յամենայն ժամ և յաւիտեանս յաւիտենից:
Ամէն:

Խաղաղութիւն ամենեցուն.

Եւ արդ՝ մեք ամենեքեան խոնարհեալ անկանիմք առաջի
քո և մեծաւ պաղատանօք հայցեմք յամենառատ յողորմու-

* Եթէ հանդէսն վասն ծննդեանն իցէ, այսպէս պարտ է ասել որպէս և գրեալն է ի կարգի իւրում. այլ եթէ իցէ վասն այլ տօնախմբութեանց՝ զաւուր պատշաճին պարտէ ասել. զոր օրինակ Անուանակոչութիւն յիշատակն՝ կամ յանուն քաղաքի յիշատակն, և կամ գահակալութիւն. Եւն:

Բայց եթէ Թագաւորութիւնն իցէ յիշատակն՝ այսպէս արժան է ասել:
Թագաւոր զմեծ Կայսրն ամենայն Ռուսաց ԱԼԷՔՍԱՆԴՐ
Ալէքսանդրովիչն և մեծ Թագուհի և Կայսրուհի ՄԱՐԻՈՑ
Ֆէոդորովնայն. ՈՐՈՑ այսօր Թագադրութեանց յիշատակն
տօնախմբելով:
(և այլն որ է կարգին):

թենէդ քումմէ (Տէր Աստուած մեր) զի շնորհեսցես զՍԱ
մեզ (զԱԼԷՔՍԱՆԴՐ Ալէքսանդրովիչ ամենողորմած
Կայսրն ամենայն Ռուսաց) ընդ երկայն աւուրս արդարադատ
և իրաւախոհ Թագաւորութեամբ, յատկապէս շնորհք, ողոր-
մութիւն և օգնականութիւն քո անպակաս արասցես ի ՍՄԱ-
ՆԷ, որովք կացցէ և մնասցէ ՍԱ անախտ հոգւով, քեզա-
հաճոյ վարուք, սուրբ և ուղղադէտ մտօք, բերկրեալ սրտիւ,
զուարթ և ուրախ դիմօք. առողջ և յամենայնէ վտանգէ ա-
զատ մարմնով ի կեանս իւր մինչև ի կէտ կոչմանն իւրոյ. և
յետ աստեացս, տացես ՍՄԱ զանվախճան և զյաւիտենական
Թագաւորութիւնդ ընդ ամենայն սուրբս քոյ: Այլև արասցես
զՍԱ լենիլ հանճարեղ ի խորհուրդս, ճշմարիտ և իմաստուն ի
բանս, խոհեմ և շրջանկատ ի գործս, արդարակշիռ ի դա-
տաստանս, ներող և անյիշաչար յերբեմնական և ի զղջու-
նակ յանցաւորս. վրէժխնդիր և անաչառ յանզեղջ և ի միշտ
շարագործս, ողորմած և քաղցր յաղքատս, ի տնանկս, ի
յորբս, և յայրիս. սիրող և խնամածու սիրելեաց և հնազան-
դելոց իւրոց. ահարկու և երկիւղալի թշնամեաց իւրոց:

Օ՛թագաւորութիւն ՍՈՐԸ յաղթօղս, զօրաւորս և ան-
պարտելիս արասցես ի վերայ ամենայն թագաւորութեանց.
ձեռն քո ընկալցի և բազուկ քո զօրացուսցէ զՍԱ. զթշնա-
միս ՍՈՐԸ հալածականս արասցես. և զյարուցեալսն ի վերայ
ՍՈՐԸ ի ներքոյ ոտից ՍՈՐԸ արկցես: Քո ամենայաղթ
զօրութեամբդ և սրբոյ խաչիդ նշանաւն ամրացուսցես և պա-
րըսպեալ պահպանեսցես զՍԱ և զթագաւորութիւն ՍՈՐԸ
յամենից յերևելեաց և յանտեսութիւնից թշնամեաց: Աճեցու-
ցես և պտղաբերս արասցես զՍԱ արքայազնօք և քոյապար-
գև զաւակօք: Ընդարձակելի և անթառամելի արասցես զթա-
գաւորութիւն ՍՈՐԸ յազգէ յազգ՝ և յորդւոց յորդիս մինչև
ի կատարած աշխարհի: Օրհնեսցես զթագաւորս (մեր զմեծ
Կայսրն ամենայն Ռուսաց զԱԼԷՔՍԱՆԴՐ Ալէքսանդրո-
վիչն ՈՐՈՑ այսօր ծննդեանն է յիշատակ). (կամ այլոցն քոյ նը-
ղանակիցեալ կերպին յաւաջին մասին է վերոյ): և զթագաւորութիւն ՍՈՐԸ

գյարկ և զենակութիւն ՍՈՐԸ. զժառանգաւորս, զծնունդս, զազգս և զամենայն ընտանիս ՍՈՐԸ։ Օրհնեսցես զամենայն հաւատարիմ և զսրտացաւ գործակալս ՍՈՐԸ. զնախարարս, զիշխանս, զկուսակալս, զօրապետս և զամենայն զօրս ՍՈՐԸ. զօրացուսցես և արիացուսցես ի պատերազմունս թշնամեաց. որոց միոն զհազարս նոցա հալածեսցէ, և երկուքն զբիւրս նոցա հարցէ։ Դու լեցիս սոցա մարտակից և զենուորակից՝ որպէս լինէիր ընդ Մովսէսի, ընդ Յեսուայ, ընդ Դաւթի, և ընդ այլոց ծառայից քոց։ Օրհնեսցես զամենեսեան որք ընդ իշխանութեամբ ՍՈՐԸ կան. զեկեղեցականսն, և զաշխարհականսն, զմեծսն և զփոքունսն, զարսն և զկանայսն, և զամենայն ժողովուրդս ՍՈՐԸ։ Օրհնեսցես զամենայն կալուածս և զերկիր և զվիճակ ՍՈՐԸ, զենակութիւն և զենակիչսն։ Որոց ամենեցունց տացես կեալ և մնալ առաքինական վարուք և բարեպաշտական կենցաղավարութեամբ ըստ հաճոյից քոց. հաւատարմութեամբ և մտերմութեամբ, խոնարհութեամբ և հնազանդութեամբ առ Թագաւորս մեր. և սիրով և խաղաղութեամբ առ միմեանս։ Նոյնպէս և զսիրտ քոյապակ Թագաւորիս մերոյ (ԱԼԷՔՍԱՆԴՐ Ալէքսանդրովիչ) քաղցր և զթած պահեսցես առ ամենայն ստորադրեցեալսն իւր. և մանաւանդ առ ազգս Հայոց. ընդ ՈՐՈՑ հովանաւորութեամբն մնալով ի խաղաղութեան, փառաւորեսցուք զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգիդ՝ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Ե- յա-ւարդ ապօրինցն յոտս կոցցեն ոտքնէ-քեան, և սկսանիցին կոտրել զիրենք-էօրական կարգն, այսպէս։

Յառաջ մատո-ցեալ սարկա-ագա-նդն յոտքեան՝ դիրքեան իմիսին երգեցցեն հայնի-ըստ կարգի եկեղեցական ընթերցս։

Եւ ես խաղաղութեան զտէր աղաչեսցուք։

Ե- պարտ-էապէն երգեցցեն դիտայն։

Տէր ողորմեա։

Վասն ի վերուստ խաղաղութեան աշխարհիս և օգնականութեան Թագաւորի մերոյ (ԱԼԷՔՍԱՆԴՐ Ալէքսանդրովչի) զտէր աղաչեսցուք։

Ողորմեաց մեզ տէր Աստուած մեր ըստ մեծի ողորմութեան քում ասասցուք ամենեքեան միաբանութեամբ։

Ե- պարտ-էապէն երգեցցեն նոյնպէս երեցս։

Տէր ողորմեա, տէր ողորմեա, տէր ողորմեա։

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։

Ցարքամ սարկա-ագա-նդն երգեցցեն հաղորդ հայնի-դիայն։

Ամէն։

Ե- դպիրքն ատ-հասարակ, կամ սրբ ատ-ենիցն զմոգելենան է յեռա՝ երգեցցեն նոյնպէս հաղորդ հայնի-։

Ալէլուիայ ալէլուիայ ալէլուիայ։

Ե- յա-ւարդ ալէլ-ուիցին՝ սկսանիցի հանդէսարքէրն. և ընդ նմա պարտ-էապէն ամենեքեան՝ ասասցեն հաջայարմար դիտայնո-ընեամբ։

Օրհնեսցի և պահպանեսցի և նախախնամեալ պահեսցի Թագաւորութիւն ամենաբարեպաշտ ինքնակալ մեծ Թագաւորի և Կայսեր ամենայն Ռուսաց ԱԼԷՔՍԱՆԴՐ Ալէքսանդրովչի. այս նշանաւ սուրբ Խաչիս և սուրբ Աւետարանաս և

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A. Публичная Библиотека
7/XI 1922
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
имени А. Мясникян

աւուրս շնորհիւ. անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից:

Սարկաւագն երգեցեն:

Ամէն:

Հաստատեսցի-նի-նք պարարտ կամ մոմակիրքն:

Ալէլուիայ ալէլուիայ ալէլուիայ:

Ես այսպէս կրկնեսցեն երկու կացեալ անշարժութեամբ է նմին պեղեալ, և յաւարտ երգոցդն ասասցեն մնայն սարկաւագն:

Ամէն:

Ցորժամ պարտաւորն ասասցեն:

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ցեպ որոյ խարոյեսցէ սարկաւագն:

Սուրբ Խաչիւս աղաչեսցուք զՏէր զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց, և կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ, ամենակալ Տէր Աստուած մեր կեցո՛ և ողորմեա:

Ես կապարօղն հանդիսին՝ ասասցէ ղաղօնն:

Պահպանեա՛ Քրիստոս Աստուած զթագաւորն մեր զինքնակալ Կայսրն ամենայն Ռուսաց ԱԼԷՔՍԱՆԴՐ Ալէքսանդրովիչն (Ես-ՐԷ ո-ՆԷՅԷ ԸՆԴ Է-Ր ՂԱՅԼ ՈՏ ՊՕՆԱՆԷՑ, ՅԵՂԵՑՑԷ ԱՍՊԱՆՕՐԼ-ՂԱՆՈ-Ն ԱՅՆՈՐԷՆ):
և զթագաւորութիւն ՆՈՐԸ. և զամենայն զժողովուրդս քո ընդ հովանեաւ սուրբ և պատուական Խաչի քո ի խաղաղու-

թեան, փրկեա՛ յերևելի և յաներևոյթ թշնամւոյն. արժանաւորեա՛ զոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ Հոգւոյդ սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից:

Ցեպ որոյ:

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս:

Երգիչն:

Ամէն:

Կապարօղն հանդիսին:

Հայր մեր որ յերկինս ես. սուրբ եղիցի անուն քո. Եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո՝ որպէս յերկինս և յերկրի: Զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր: Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր՝ որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն. այլ փրկեա՛ զմեզ ի չարէ. զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս:

Օրհնեալք եղերուք ի շնորհաց սուրբ Հոգւոյն. երթա՛յք խաղաղութեամբ. և Տէր եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեանդ.

Ամէն:

ԿԱՑՍԵՐԱԿԱՆ

ՏՕՆՔ ՌՈՒՍԱՑ

ՅՈՒՆՎԱՐ

1 Ծն. Ն. Կ. Բ. Ալէքսէյ Ալէքսանդրովչի։

10 Ծն. Ն. Կ. Բ. մեծ Իշխան Պետր Նիկոլայեվչի։

24 Ան. Ն. Կ. Բ. մեծ Իշխանուհւոյ Կսենեայ Ալէքսանդրովնի։

ՓԵՏՐՎԱՐ

3 Ծն. Ն. Կ. Բ. Նիկոլայ Կոստանդինովչի և տօն ասպետական Նշանաց սրբոյն Աննայի։

4 Ծն Ն. Կ. Բ. Մեծի Իշխանուհւոյ Վերայ Կոստանդինովնայի։

26 Ծն. Օգոստափայլ կայսեր ԱՂԷՔՍԱՆԴՐ ԱՂԷՔՍԱՆԴՐՈՎՉԻ։

ՄԱՐՏ

1 Գահակալ. Օգոստ. Կայսեր Ռուսաց ԱՂԷՔՍԱՆԴՐ ԱՂԷՔՍԱՆԴՐՈՎՉԻ։

25 Ծն. Ն. Կ. Բ. Կսենեայ Ալէքսանդրովնի։

ԱՊՐԻԼ

1 Ծն. Ն. Կ. Բ Բարեպաշտ Թագ. Մեծ Իշխան Ալէքսանդր Միխայելովչի։

10 Ծն. Ն. Կ. Բ. Վլադիմիր Ալէքսանդրովչի։

17 Ծն. Մեծ Իշխան Նիկոլայ Միխայելովչի։

23 Ան. Ն. Կ. Բ. մեծ Իշխան Ալէքսանդրայ Եսսիֆովնի և Ալէքսանդրայ Պետրովնի։

27 Ծն. Ն. Կ. Բ. Մեծ իշխանի Գէօրգի Ալէքսանդրովչի։

29 Ծն. Ն. Կ. Բ. Սերգէյ Աղէքսանդրովչի։

ՄԱՅԻՍ

6 Ծն. Ն. Կ. Բ. ժառանգի Կայսեր Նիկոլայ Աղէքսանդրովչի։

11 Ան. Ն. Կ. Բ. Կիրիլ Ալէքսանդրովչի։

14 Ծն. Ն. Կ. Մեծ Իշխ. Մարիի Պավլովնայի։

15 Թագադրութիւն Նոցին ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆՑ Օգոստափառ Կայսեր ԱԼԷՔՍԱՆԴՐ Գ. ԱԼԷՔՍԱՆԴՐՈՎՉԻ և Կայսերուհւոյ ՄԱՐԻԱՑ ՖԷՈԴՈՐՈՎՆԱՑԻ։

20 ԱՆ. Ն. Կ. Բ. Ալէքսէյ Ալէքսանդրովչի և Ալէքսէյ Միխայէլովչի։

21 ԱՆ. Մեծի Դքս. Կոստանդին Նիկոլայէվչի և Կոստանդին Կոստանդինովիչի և ԾՆ. Աղէքսանդրայ Պետրովնի։

ՑՈՒՆԻՍ

1 ԾՆ. Ն. Կ. Բ. Մեծ Իշխ. Դիմիտրի Կոստանդինովիչի։

26 ԾՆ. Ն. Կ. Բ. Մեծի Իշխանուհւոյ Ալէքսանդրայ Եսսիֆովնի։

29 ԱՆ. Ն. Կ. Բ. Մեծ Իշխ. Պաւել Աղէքսանդրովչի, և Պետր Նիկոլայեվչի։

ՑՈՒԼԻՍ

5 ԱՆ. Ն. Կ. Բ. Սերգէյ Աղէքսանդրովչի։

11 ԱՆ. Ն. Կ. Բ. Օլգայ Նիկոլայեվնի և Օլգայ Ֆէօդորովնի և Օլգայ Կոստանդինովնի։

15 ԱՆ. Ն. Կ. Բ. Վլադիմիրայ Աղէքսանդրովչի։

16 ԾՆ. Ն. Կ. Բ. Բար. Թագ. մեծ Իշխանուհի Անաստասի Միխայելովնի։

22 ԱՆ. Ն. Կ. Մ. Բ. Թ. Կայսրուհւոյ Մարիա Ֆէոդորովնի, եւ Մարիա Աղէքսանդրովնի։

24 ԱՆ. Ն. Կ. Բ. Մեծ Իշխ. Բարիս Վլադիմիրովչի։

27 ԾՆ. եւ ԱՆ. Նիկոլայ Նիկոլայեվիչի անդրանկին, եւ ԱՆ. Նիկոլայ Նիկոլայեվչի, կրտսերոյն։

ՕԳՈՍՏՈՍ

10 ԾՆ. Ն. Կ. Բ. Կոստանդին Կոստանդինովչի։

11 ԾՆ. Ն. Կ. Բ. Գէօրգի Միխայելովչի։

16 ԾՆ. Ն. Կ. Բ. Եկատարինեայ Միխայելովնի։

22 ԾՆ. Ն. Կ. Բ. Օլգայ Կոստանդինովնի։

30 ԱՆուանակոչ. Օգոստ. Կայսեր. ԱՂԷՔՍԱՆԴՐ ԱՂԷՔՍԱՆԴՐՈՎՉԻ, և մեծ Իշխան Ալէքսանդր Միխայելովչի։ ԾՆ. Ն. Կ. Բ. Օլգայ Նիկոլայեվնի։ Նաեւս տօն ասպետութեան Ս. Աղէքսանդրի Նեվսկւոյն։

ՍԵՊՏԵՄԲԵՐ

8 ԾՆ. Ն. Կ. Բ. Օլգայ Ֆէօդորովնի։

9 ԾՆ. Ն. Կ. Բ. Կոստանդին Նիկոլայեվչի։

17 ԱՆ. Ն. Կ. Բ. Մեծի Իշխանուհւոյ Վերայ Կոստանդինովնի։

21 ԾՆ. Ն. Կ. Բ. Պաւել Աղէքսանդրովչի, և ԱՆ. Ն. Կ. Բ. Դիմիտրի Կոստանդինովչի։

25 ԾՆ. և ԱՆ. Ն. Կ. Բ. Մեծ Իշխանի Սերգէյ Միխայելովչի։

30 ԾՆ. Ն. Կ. Բ. Կիրիլի Վլադիմիրովչի։

ՀՈԿՏԵՄԲԵՐ

4 ԾՆ. Ն. Կ. Բ. Բար. Թագ. Մեծ Իշխան Միխայել Միխայելովչի։

5 ԾՆ. Ն. Կ. Բ. Մարիայ Աղէքսանդրովնի։

13 ԾՆ. Ն. Կ. Բ. Մեծ Իշխան Միխայէլ Նիկոլայեվչի։

ՆՈՅԵՄԲԵՐ

6 ԾՆ. Ն. Կ. Բ. Նիկոլայ Նիկոլայեվիչի կրտսերոյն։

8 ԱՆ. Ն. Կ. Բ. Միխայել Նիկոլայեվչի և Միխայէլ Միխայէլովչի։ Տօն ամենայն ասպետական Նշանաց Ռուսաց։

14 ԾՆ. Ն. Կ. Բ. Մ. Թ. Կայսրուհւոյ Մարիայ Ֆէօդորովնի։

16 ԾՆ. Ն. Կ. Բ. Մեծ Իշխան Բարիս Վլադիմիրովչի։

22 ԾՆ. Ն. Կ. Բ. Մեծ Իշխան Միխայէլ Ալէքսանդրովչի։

24 ԱՆուանակոչ. Ն. Կ. Բ. Եկատարինէ Միխայելովնի։

26 ԱՆ. Ն. Կ. Բ. Գէօրգի Ալէքսանդրովչի և Գէօրգի Միխայէլովիչի։

ԴԵԿՏԵՄԲԵՐ

6 ԱՆ. Ն. Կ. Բ. Ժառանգ Նիկոլայ Աղէքսանդրովչի, Նիկոլայ Կոստանդինովչի և Նիկոլայ Միխայելովչի։

16 ԾՆ. Ն. Կ. Բ. Ալէքսէյ Միխայելովչի։

22 ԱՆ. Ն. Կ. Բ. Անաստասայ Միխայելովնի։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI. 1922
именА. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

2758

<< Ազգային գրադարան
NL0029812

2676